Ռինդ

Բնակչության թիվը՝ 1548

Ռինդ գյուղը հիմնադրվել է 1800թ-ի սկզբներին, Շորգեցի Սիմոնի կողմից, որից հետո այնտեղ են հաստատվել Մելիք Բալին իր եղբայրներ Աղաբաբի և Գրիգորի հետ միասին, Զարգար Թադևոսը և այլ ընտանիքներ։

1967թ-ին սողանքի պատճառով գյուղը տեղափոխվել է և հիմնվել հին գյուղատեղին հարող «Թափ» հանդամասում։

Ներկայումս գյուղի վարչական տարածքը 4388.32 հա է, տնտեսությունների թիվը՝432:

Մարզկենտրոնից հեռավորությունը 25կմ է, մայրուղուց՝ 4կմ։

Ռինդ գյուղը սահմանակից է Ելփին, Չիվա, Արենի, Աղավնաձոր, Հորս,Թառաթումբ համայնքներին։

Գյուղի տարածքում պահպանվել են XII-XIII դարի եկեղեցու մնացորդներ, մատուռներ, XIII-XIV դարի խաչքարեր։

Բնակչությունը հիմնականում զբաղվում է խաղողագործությամբ, անասանապահությամբ, այգեգործությամբ։ Գյուղը հայտնի է իր մշակած մրգերով՝ դեղձ, ծիրան և արտադրած համեղ գինիով։

Գյուղը ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, մանկապարտեզ, փոստ և բուժկետ: